ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 430
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքը (Ղազարավան բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ

(Աշտարակ համայնքի (Ղազարավան բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքը (Ղազարավան բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արագածոտն-2 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի (Ղազարավան բնակավայրի) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
02-068-0001-0021 կադաստրային ծածկագրով 0.1244 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք	02-068-0001-0021 կադաստրային ծածկագրով 0.1244 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Աշտարակ համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Ղազարավան բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի (Ղազարավան բնակավայրի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ե.Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝ ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի աշխատանքային պարտականությունները կատարող՝		
		Լ.Սարգսյան

Երևան, «18» «նոյեմբերի» 2024 թ.